

ՏԱՃԱՐ ԷՔ ԱՍՏՈՒԾՈՅ

«Այ գիտէք եթէ տաճար էք Աստուծոյ
և Հոգի Աստուծոյ բնակեալ է ի ձեզ: Եթէ
որ զտաճար Աստուծոյ ապականէ, ապակա-
նեցցէ զնա Աստուած, զի տաճար Աստու-
ծոյ սուրբ է, որ էք զուրք» (Ա. Կորն. Գ.
16—17)

Աստուածութիւնն ունի շատ հրաշալի
տաճարներ, որոց մէջ փառարանուում է ան-
ընդհատ:

Առաջինն է անբարոյի եկեղեցւոյ տաճարն,
այս է անթիւ Հրեշտակաց բնակութիւնն, ինչ-
պէս ասում է առաքեալն «ի բիւրաւոր բա-
նակս Հրեշտակաց և յեկեղեցւոյ Անբարոյաց»
(Եբր. ԺԲ. 22—23):

Երկրորդ տաճարն է երկնի անշուշտ խա-
ժան, որի մէջ արեգակն, լուսինն, մոլորակ-
ներ և ամբողջ համաստեղութիւնն միշտ օրհ-
նում և փառարանում են Տիրոջ իւրեանց լոյ-
սով և անխախտ շրջաններով, ինչպէս գրու-
ած է (Դան. Գ. 58—84):

Երրորդն է Տէրեղբի աստուծոյ, որի մէջ միշտ
օրհնում են իւրեանց Ստեղծողը ամպերն, այս
և այն կողմերն շարժուելով, անձրեւ, ցօղ,
ձիւն իջնելով, թռչուններն ծրլւելով, եր-
գելով, հողմերն, զեփիւռներն հնչելով, գե-
ական և աղբիւրներն փայլելով, կարկաշտով և
ծովերն ու լճակներն ծփծփալով և ալեկո-
ծումներով:

Չորրորդ տաճարն են ամբողջ ուղղափառ
Քրիստոնէից վանքերն, եկեղեցիներն, անա-
պատներ և մատուռներն, որոց մէջ լինում են
աղօթք, մաղթանք և պատարագ: Ահա այդ
բոլոր տաճարների մասին ասում է Տէրն. «Եր-
կներ աթոռ իմ են և երկիր պատուանդան ռաից
իմց» (Ես. ԿԶ. 1):

Հինգերորդ տաճարն է ամեն մի ուղղա-
փառ քրիստոնէայ մարդ՝ թէ արական լինի և
թէ իգական: Այս կենդանի և անմահ տաճա-
րի աղօթաւոր փառարանին է իւրաքանչիւ-
րի հոգին, սուրբ սեղանն է սիրտն ինկոց ա-
նուշահոտութիւնն է առ Աստուած եղած
սրտալին դիպչոնախնդրն: Աստուածութիւնն

հանգստանում է սուրբ սրտերի սեղանների
վերայ և անձամբ լուում հոգիների մշտամուռն
թախանձանքները, որք երկիւղածութեամբ նը-
ուիրում են իրան: Այս տաճարների մէջ է
յղանում և ծնում հիմարի հաւատն, առ-
խախտ յոյսն և անկեղծ սիրն զէպի Աստուա-
ծութիւնն: Այս տաճարից առ Աստուած բար-
ձրանում են քերականի աղօթքներ, քերմա-
ղին խնդրուածքներ և սրբանուէր զգացումեք-
ներ:

Եայց այստեղ շատ և շատ դարմանալու
ենք Աստուծոյ մարդասիրութեան վերայ, որ
բոլոր տաճարներից աւելի շատ է սիրում այս
վերջին տաճարը — քրիստոնէից մարմնոյ տա-
ճարը: — Արովհետեւ Աստուծոյ սահմանած (և
մեզ անյայտ) մի օրում անպատճառ կը կոր-
ծանուին Տիեզերքի բոլոր տաճարներն, բայց
մարդն ոչ. քանզի մի հոգին Տիեզերքից շատ և
շատ զերազանց է Աստուծոյ համար քան թէ
այդ տաճարներն, ինչպէս վկայում է վերջին
ասելով. «Երկն և երկիր կանցանէն» որովհետեւ
երկինք և երկիր ստեղծուած են Աստուծոյ
խօսքով, իսկ մարդն ստեղծուած է Աստուծոյ
ձեռքով, ամբողջ տիեզերքն մարդոյ համար, մար-
դը՝ Աստուծոյ համար: Ահա այսպէս մարդս
տաճար է Ա. Հոգուն: Ար որ լինի Ա. Հոգին,
այնտեղ կը լինի և Հայր Աստուած և Արդին
Աստուած: (Ես և Հայր իմ) «առ նա եկեա-
ցուք և օթեանս առ նմա արտացուք» (Յով.
ԺԲ. 23): «Ապաքէն դուք տաճար Աստուծոյ
կենդանոց էք, որպէս և ասաց Աստուած թէ
բնակեցայց ի նոսա» (Բ. Կորն. Զ. 16) և թէ
«Զգիտէք թէ Աստուծոյ տաճար էք և Աս-
տուծոյ Հոգին բնակած է ձեր մէջ» (Ա. Կորն.
Գ. 11): Այս տաճարի մէջ է հանգստանում
և մեր առած հաղորդութիւնն — քրիստոնէի
հոգին: «Երանի նոցա, որ սրտով սուրբ են, զի
նոքա կը տեսնեն զԱստուած» (Մատ. Ե. 8):

Սուրբ է Աստուած, սուրբ լինելու է և
Աստուծոյ բնակութեան տեղին, սուրբ լինելու
են և մեր մարմնոյ տաճարներն: Վայ այն մար-
դոց, որ ողջում են իւրեանց մարմնոյ աստուծո-
յնէրը: Այսպիսի մարդիկ չեն հարող քրիստոնէ
զԱս-
տուծոյ: Այժմ հարկ և եղբայր, մայրեր և քոյ-
րեր, լաւ լսեցէք. Յիսուս Քրիստոս մտաւ երու-
սաղէմի տաճարն, տեսաւ այն տեղ Աստուծոյ

առն միջ անխախտ սեղաններս օթոններս թրա-
չուններ և անտուռներս այլևս չկարողացաւ
համբերել: Այլ շինեց չուանեայ խարաղան և
սաստիկ բարկութեամբ ծեծելով տաճարից
դուռս հալածեց ծախող և առնող մարդկանց
և կործանելով սեղանները և օթոնները, ա-
սաց. գրուած է տուն իմ՝ տուն աղօթից կո-
չեցիս և դուք արարիք զգա այլս աւաղա-
կաց: 1 (Մատ. ԻԱ. 12—13. Մար. ԺԱ.
15—17. Յով. Բ. 14—16): Յիսուս Քրիստոս
(որ հաստատ գուշակած էր թէ 67 տարուց
յետոյ կործանուելու էր այն տաճարն) եթէ
այն ատիճան նախանշանդիր էր կործանու-
ելի տաճարի սրբութեանն որչափ ևս աւելի
նախանշանդիր է մեր մարմնոյ տաճարների
սրբութեան և մարբութեան համար: Ինչպէս
էք կարծում եթէ փրկիչն մոռնէ մեր մարմնոյ
տաճարների միջ, միթէ այնտեղ չգիտէր Աս-
տուծոյ ներկայութեան և բնակութեան ան-
փայել խորհուրդները և հրաշքներն: Հայր-
տութեան ամբարտաւանութեան չար նախան-
շիս անտեղի բարկութեան մահացու ծախ-
ութեան «եղաններ» աղահալութեան, որկրամոլու-
թեան արեւելութեան հայհոյութեան գողու-
թեան յափշտակութեան մատնութեան ա-
նուանարկութեան ակումներ բարոյապէս մար-
դասպանութեան անտանական ցանկութեանց
անբարոյական կեանքի, հոգեկորուստ մոլու-
թեանց և ուրիշ անթիւ և անհամար մեղաց
«եղաններ» և ակումներ: Այս ամենը տեսնող Յի-
սուս Քրիստոս միթէ մեզ չյանդիմանէր աւե-
լով. է՞նք որոնք աղէկէ՞նք որոնք է. և որոնք այդ
որոնք որոնք խելեղէ՞նք անապատաց Կարայի (մա-
ղարայի): միթէ խարաղանով դուռս չհալածէր
այդ անապատ և խելեղան մոլութիւնները:
Սորա համար է ասում Պողոս առաքեալն այս

սարսափելի խօսքը. Է՞նէ Էնէ Կապալանէ Աստու-
ծոյ Կաճարը Աստուած էլ Կապալանէ զիս. ո-
րովէ՞նք Աստուծոյ Կաճարն «որք է» որ է՞նք որոնք:
Այս այս տաճարն — մեր մարմնոյ տաճար-
ներն — սրբուած է աւաղանին ջրով յանուն
Հօր և Արդւոյ և Հոգւոյն սրբոյ մկրտուելով
և Էնք-Էնք և սրբալոյս միւսոնաւ շառ-Էնք և
հաղորդութեամբ Յիսուսի Քրիստոսի կենարար
մարմնոյն և արեան: Սորա համար էլ ասում
է նոյն առաքեալն. յէր անշուք Կէրն չէ. ո-
րովէ՞նք Գնով Գնուած է. Կապալանէնք Ա-
ստուծ յէր Կարմով և Կարմով որ Աստուծոյ
է: Պողոս սրբազան առաքեալն կամենալով
յուշ ածել մեզ Քրիստոսի մեր վերայ ունե-
ցած անփախարկելի երախտիքը վճարար ա-
սում է. որոնք յէր անշուք Կէրն չէ. յէր ան-
շուք Կէրն Յիսուս Քրիստոս է. որովէ՞նք որոնք
Գնուած է Գնով: Պետոս ո՞ր առաքեալն աւե-
լի պարզ է խօսում՝ տեսլով. իմացած լինիք,
որ դուք փրկուած էք ձեր հայրենի ունայն
գնացքից՝ ոչ ոսկականացու արծաթեղէններով
և օսկեղէններով այլ Քրիստոսի պատուական
արիւնով, ինչպէս անբիծ և անարատ գասին
(Ա. Ղևոս Ա. 15):

Գանի որ մենք մեր անձանց տերն չենք,
քանի որ փրկիչն իւր աստուածախառն մարմնը
խաչելով և պատուական արիւնը թափելով
գնած է զմեզ սատանայի զերութիւնից, հար-
եղածին չափ աշխատենք մարտը պահել մեր
մարմնոյ տաճարները: Աշխատենք որ աստուա-
ծալայել լինին մեր սրտերն իբրեւ Տիրոջ
բնակարան: Աղօթենք ներսէս Շնորհալու հետ
տեսլով. «նորոգող հնութեանց» նորոգեալ և
զիս նորոգ զարգաբեալ և Գաւթի մարգարէի
հետ թախանծելով ասենք. «սիրա սուրբ հա-
տաեա յիս Աստուած, և հոգի ուղիղ նորո-
գեալ ի փորի իմում: Մի՛ ընկենուր զիս Տէր,
յերեւաց Քոց և զՀոգի Քո սուրբ մի՛ հաներ
յինէն: Տէր Յիսուս Քրիստոս ամեն տեսակ
մեղքերից և մոլութիւններից սուրբ պահիր քո՞
կենդանի տաճարները, ամէն:

1 Սողոմոնի շինած Տաճարի մասին Աստուած
ասած էր. «նոցա (Հրէից) զոհերն, ողջակէզ-
ներն և նուէրներն ընդունելի կը լինին իմ սեղա-
նի վերայ, որովհետեւ աղօթքի տուն կը կոչուի իմ
տունն ամեն հեթանոսաց համար» (Ես. 29. 7):
Մի և նոյն Աստուած, յետոյ տեսնելով նոյն Տա-
ճարի անպատշաճութիւնը, կողոպտեք աւաղակութեան
հասած, ասում է. «Միթէ աւաղակաց քաբայր
եղան իմ այդ տունն, որի վերայ կոչուած է իմ
անունն» (Երեմ. Է. 11):

